Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4142
4143, 4144

281.6
U-97

2010

ARMENIAN YOUNG MENS CLUB,
ESTABLISHED 1911
WEST DIDSBURY PUBLIC HALL
DIDSBURY.
MANCHESTER.

281.6
U-97

# ՀԵՐՔՈՒՄՆ

## ԱՆԻՐԱՒ ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆՑ

ԵՒ ԱՂԵՐՍ

ԱՌ

## ԸՆԴ ՀԱՆՈՒՐ ԲԱՐԵԽՈՐՀՈՒՐԴ

# ԱՕԴԱՑԻՆ ԺՈՂՈՎՆ

---

ՀՐԱՄԱՆԱՒ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՑՆ

---



ՑԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1861

# Յարեմիր զարեմիր Սիօն, և զգեցիր զզօրութիւն քո և դու զգեցիր ըզ փառս քո, Երուսաղէմ քաղաքդ սրբոյն. Եսայի, ԾԲ. 1։

50330-ախ

ՊԵՏ ԿԱՌ ՉՐԱՏԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ անվան
им. А. Мясникяна

36738-66

# ՀԵՐՔՈՒՄՆ
## ԱՆԻՐԱՒ ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆՑ
### ԵՒ ԱՂԵՐՍ
## ԱՌ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԵԽՈՐՀՈՒՐԴ
## ԱՀԳԱՑԻՆ ԺՈՂՈՎՆ

*Վասն Սիոնի ոչ լռեցից, և վասն Երեմի ոչ ներեցից. Եսայի, կԲ. 1։*

ԵԹԷ անարգութիւնը մանաւոր ըլլար, եթէ անպատուութիւնը մանաւորի վերաբերեր, թերևս լռէինք և անյիշաչարութեամբ ներէինք. բայց որովհետև ընդհանուրին պատիւը և վարկու մը յանիրաւի աղարտեցաւ՝ ուստի ակամայ բռնադատուեցանք պատասխանել, և մեր պատիւը պաշտպանել. ապաքէն եթէ կարելի է կրնդրեմք պարկեշտութեամբ որ սիրելի Ազգերնիս ներողամիտ ըլլայ մեզ և արտօնութիւն տայ փոքր ինչ աղատ խօսելու. և եթէ 'ի հարկէ ստիպեալ կրնամ խօսք մը գտնուի մեր այս թերթին մէջ զայն հակառակորդին վերաբերելով անմեղադիր թող ըլլայ։

Արդ՝ եթէ երուսաղէմայ միաբանութեան կողմէն Ազգը երբէք վնասմը տեսած է թող յայտնէ. իսկ եթէ չէ տեսած, ինչո՞ւ կրթողու որ զրպարտիչներ անխոհեմ բերանները ուղածնին կրխօսին. ինչո՞ւ արձակերասան կրձգէ այն դլուխները որ Անմեղները ոտքի տակ առնելով կրմիրաւորեն։ Եթէ երուսաղէմայ միաբանութիւնը Ազգին բարի կամաց խաչնդակ

եղած է, եթէ անոր օգտակար որոշմանցը հակառակ կեցած է, եթէ ոչ և իցէ կարելի և օգտակար խընդրոց ընդդիմացած է, թող նախատէ, թող խրատէ, և թող յանդիմանէ. բայց ոչ Մեղուի և Միւնէտիի զրպարտիչ թերթերովը։ Միաբանութիւնը ընդհանուր Ազգին արդար իրաւանց հաւատարիմ Աւանդապահն է, և Ազգին զգացմանցը հետ համակրութիւն ունի. երբէք անկէ բաժնուելու կամ հակառակելու վատ խորհուրդը երևակայած չէ. բայց խօսքս ընդհանուրին է և ոչ թէ մասնաւորին։

Պանդղ Ազգասէր և Հայրենասէր Վարդանանց զօրաւարաց մէջ՝ վասակ մալ կրնայ գտնուիլ. և Քրիստոսի երկոտասան աշակերտաց մէջ՝ Յուդայ մը գտնուելով մեռասաններուն անպատուութիւն չէ. ուստի մենք ալ այնպիսի անհատները մէկ դի ձգելով ամբողջութեանը նայինք և քննենք։ Երբ արդէօք մենք Ազգին իրաւացի գանգատանացը իրաւունք տուած չեմք, երբ մեր յօժարութիւնը Ազգին կամացը ենթակայ ըրած չեմք, բայց ինչ կրսէք, ամէն յառաջարկութիւններն ալ առանց դատաստանի առանց քննութեան ընդունիմք. չէ՞ որ այս ազատութիւնը դուք բացարձակ քարոզած էք. և երբ որ, ազատութեամբ և անկեղծաբար անպետ պարագայները կըհերքուին, ինչու կըդժուարիք, ինչու համար կըթողուք որ զուր տարապարտ տեղը այսքան ժամանակի աշխատաւոր վշտակիր միաբանութեան մը անարատ սիրտը ցաւցընեն։ Այն սիրտը որ Ազգին իրաւանց ամբողջութիւնը պահելու համար, թշնամւոյն անողորմ հարուածոց դէմ արիութեամբ ախոյեան կեցած է. ինչու կըխոցէք այն սիրտը որ ղիւցազնական քաջութեամբ ազգին իրաւունքը յափշտակող ընտանի թշնամիներէն արդէն վիրաւորված է, ինչու սուտ, փտամոլ, շահախնդիր մարդ-

կանց խօսքին նայելով կը թողուք որ անողորմաբար կը կըռփեն այն գլուխը, որ վայելել և դանակնե-ռէ ընդունած՝ վերաց արիւնը դեռ ցամքած չէ։ Կաղաչեմք՝ ո՛ սիրելի և օրհնեալ Ազգայինք, կաղաչեմք։ յիշեցէք մեր վաստակը, խորհեցէք անգամ մը և ու-ղիղ դատաստան ըրէք, ըսէք նա և այն անխոհեմ հրատարակիչներուն որ ողջմտութեամբ քննեն և ուղիղ տրամաբանեն, կը խնդրեմք Թող Ճանչնան ի-րենց հանած հետևութեան և կարծեաց սխալմուն-քը։ քանզի հոս տեղ բնաւ գաղտնիք մը չի կայ, որ այսօր չի յայտնուեցաւ նէ՝ վաղը ուշ կամ կանուխ պիտի յայտնուի։ Թող բարեմիտ նկատմամբ դիտեն և կըտեսնան թէ միաբանութիւնը իրաւունք ունի թէ չունի տեղապահ գալը հերքելու։ Հարցուցէք Մեղուին թէ երբ ծառայի մը իր սենեակին բանա-ղին տայ և խրկէ հոն գործի մը համար, եւէն ու-րիշ ծառայ մալ խրկէ նէ առաջինը ինչ կարծիքներ կրնայ ընել, ասոր պատասխանը իրեն կը թողումք։ Բայց կաղաչեմք Զեզ ո՛ Սրբազան Հայրք և Բարձրա-պատիւ Տեարք։ կաղաչեմք, Ճանչցէք մեր հաւատար-մութիւնը և վստահ եղէք որ մեզ մը անգամ չեմք կորսնցուներ և դիտցէք որ տեղապահ գալը մեղի շատ պատիւ չբներ, եթէ բարեկարգութեան և յա-ռաջադիմութեան կը ցանկաք՝ բարեհաճեցէք ուրե-մն շուտ կերպով մեր գլուխը ընտրել։ հաւատաց-դիտցէք որ ամենքիս ալ թշնամի եմք տգիտութեան և մոռառողք ընդդէմ անկարգութեանց։ վստահ եղէք կըսեմք, որ այսու հետև ալ աչք գոյող չի կայ որ և իցէ անվայել վարմունքներու։ Թող գիտնան ղպարտիչք, որ Երուսաղէմայ միաբանութիւնը ի-րենցմէ և իրենց կարծածէն շատ ու շատ աւելի Ազ-գասէր և Ուսումնասէր է։ եթէ հարկ ըլլայ Հրա-տարակչաց աղդատեցութիւնը կշտամբել պէտք է որ

իրենց պէս թերթ մը իրենց պակասութիւնները ուղղելու համար պարապի. կաղաչեմք՝ ըսէք մեզի որ արարողութիւններս ճիշդ ի թուութիւն կը համարուի, խոհեմութեամբ յանդիմանեցէք և յօժարութեամբ կընդունիմք. բայց գիտցէք որ այդ բառը մեզի համար չափէ դուրս ստութիւն մը՝ և զուր զրպարտութիւն մընէ. որն որ իսպառ կը հերքեմք, և կըդարձուցնեմք այդ անունը անոր՝ ով որ հնարեց, շնորհաւոր ըլլայ՝ բարեաւ վայելէ. քանզի այդ ողջոյն ոչ հանգեաւ 'ի մեզ, ուրեմն դարձցի առ այն ուստի եկն. թող գիտնան պարզապէս որ իրենց ինչ ըլլալը յայտնեցին։

Մենք ինչպէս որ յառաջ ըսինք՝ երբէք կամք չունէինք այդպիսի բարբանջմանց պատասխանել. բայց ստիպողական կեաս մը բռնադատեց զմեզ ակամայ գրիչ առնել և ընդդէմ կամայ մերոյ բողոքել առ վարչութիւնն, մեր բողոքը առ ձեզ է և ոչ առ լրագրագետս. քանզի դեռ անոնց հետ խօսելու պատիւը չունիմք, և չեմք ուզեր ունենալ. եթէ ուրիշ անգամ ալ պատահի (զոր Տէր մի արասցէ) դարձեալ մեր խօսքը Աղդին կառավարութեան և ընդհանրութեանը պիտի ուղղեմք, աղաչելով որ մեր պատուոյն հոկէ. եթէ մեզ կը հաւատաք, ճշմարտութեամբ կըսեմք որ Միւնէտին և Մեղուն սուտ են, զրպարտութիւն ըրած են, թշնամական ոգով գրած են, թէպէտ Մեղուն ամէն բարուրանք ընելէն վերջը (մենք Երուսաղէմայ միաբանութեան թշնամին չեմք) կըսէ, ինչպէս հաւատամք այս բանին, քանզի "Ծառ 'ի պտղոյ իւրմէ ճանաչի". եթէ Աղգասէր ըլլար, չարագրգիռ պորտաբոյծներուն խօսքէն առնելով առանց դատաստանի ամենածանր զրպարտութիւն մը չէր ընէր պարկեշտ միաբանութեան մը վրայ, զրպարտութիւն մը զոր յիշելը մեզ սոսկում

կրպատճառէ, յանցանք մը որուն ծանրութիւնը տա-
բապարտ տեղը կրելը տանելու բեռ չէ. Մեղուն լը-
սերէ որ պակասութիւն մը յանդիմանելով կըշտկուի,
բայց ինքը սխալ կըգործածէ. ծառայի մը չըրած
պակասութիւնը յանդիմանելով՝ անոր այն գործը ը-
նել կըսորվեցունէ. ոմ ըսաւ Մեղուին թէ եէմայ
գանձը վարդապետաց սնտուկը պարպուած է. և որ
վարդապետին սնտուկը. թէ որ մենք եմք Երուսա-
ղէմայ վարդապետները սնտուկնիս գանձ չիկայ, տու-
կոսով ալ ստակ տուած չեմք. և եթէ մասնաւոր մը
այդ ախտը ունի՝ և իր անձնական դրամը տոկոսի տա-
լով չէ կրցեր ետ առնել. այդ ալ դարձեալ իրեն
ըսողը կըկարծեմք որ ըլլայ, չէ նէ մենք չեմք գիտեր։

Հարցուցէք նա և այն հրաշալիօս Մեղուին,
որ Պատրիարքը և Լուսարարը կողոպտած ստակնին
ոուր տարին, կամ ինչ ըրին, կարծեմ հրեշտակաց հետ
առուտուր ունին. եթէ ուզեմք, Մեղուին խօսքերէն
մենք ալ զանազան հետևութիւններ կրնամք հանել,
բայց մեր պարկեշտութեան չի վայլեր. ըսէք նա և
Մեղուին որ Թող չերդիծանէ մեր եղբարքը որոնք
ժողովքի մէջ ըսած են թէ «մեղի մարդ պէտք չէ. և
թէ որ պակասութիւն մը ըլլայ՝ գլուխնիս կարեցէք»։
Ահա իւր հետաքրքրութիւնը աւելցունելու համար
այդ խօսքը մենք ալ կը կրկնեմք, Թող Ազգը ուզածին
պէս ընէ՝ թէ որ մեր պակասութիւնը գտնայ. բայց
այս ալ չի մոռնամք հարցընելու, ինչու համար Մե-
ղուն մինչև հիմա լռած էր, և այժմ ելած Երուսա-
ղէմայ միաբանութիւնը կընախատէ. քանզի Մեղուն
անանկ համարած է որ, թէ սահմանադրութիւնը և
թէ Ազգին մէջ մնած բարեկարգութիւնները՝ իւր
ծաղրաբանութեան և անուանարկ յօդուածոց աբ-
գասիքներն են. ուստի տեսաւ որ մեր միաբանու-
թիւնը ամէն ջանք 'ի գործ դրած կաշխատի կարելի

եղածին չափ յառաջ երթալ, և Ազգին արդի զգայմանցը հետեւիլ. և գիտցաւ որ այս բանին մէջ ինքը մատ չունի. ուստի գոնէ այս կերպով՝ պարծենալու առիթ մը ունենալ կը ջանայ։ Սակայն Թող գիտնայ որ մենք մեր հաւասար միութեամբը գործած առաքինութեան մեղրը իրեն չենք կերցուներ, մենք ըստեղ բարեկարգելու համար այդ Մեղուին չենք կարօտիր. աղէկ Թող գիտնայ որ իւր ձանձրացուցիչ բզզանքը մեր ականջին ազդեցութիւն չընէր. Ազգին կառավարութիւնը գրագիր ունի և շնորհք կընէ՝ թէ որ առանձին նամակով զմեզ խրատէ՝ թէ որ պակասութիւններս տեսնայ։ Խեղճ Մեղուն Ազգին բարիք ընելու փափաքով իւր արժէքը ճանչցուց՝ և Ազգին առջև իւր պատիւը աղարտեց. Ազգին բարիք ընելու նպատակաւ ինչ չարիքներ կը հասցունէ, ինչ սրտէր կը վիրաւորէ։ Կաղաչեմք օրհնեալ Ազգին բարեխնամ կառավարութեանը որ զեկուցանեն Մեղուին և Միւնէտիին թէ միաբանութիւնը արդէն ոտն առ ոտն յառաջ կերթայ 'ի բարեկարգութիւն. թէ որ չիհաւատար՝ Թող մեր տպած կանոնին ներքին խորհրդոյն Ե. Զ. Է. յօդուածները կարդայ և գիտնայ որ յառաջադիմութեան ջանք ունինք. ուստի ինքը իւր բզզալովը Թող չի խանգարէ մեր գաղափարը։ Սահակ վարդապետին երեք չորս տարի է 'ի վեր հաչիւ տալը և չի տալը Մեղուին չի վերաբերիր, ատիկայ վերջին խնդիր է։ Մեղուն ինչ համարձակութեամբ Երուսաղէմայ տունը խարդախութեան գործարան կը կոչէ, չամաչէր. Ազգին երևելի տեղը վատ անուամբ կարատաւորէ. դրէց՝ իմացաւ մեզմէն թէ մենք որու նամակ գրած ենք, Թող լաւ գիտնայ որ այն Ազգին երևելեաց գրուած նամակները մենք գրած ենք, և նախագաղափարն ալ կայ քովերնիս, եթէ հարկ ըլլայ կրնամք վաւերացունել։ Բայց դուք

ի Սրբազան Հայրք և Բարձրապատիւ Տեարք, ինչպէս կրնաք համբերել այս անարգութեանց, արդարև չեմք յուսար բնաւ որ անտարբեր կը մնաք. սուրբ Աթոռոյս պատիւը պաշտպանելը Ձեզի յանձնելով, մենք անցնինք ուրիշ կարևոր կետերը քննելու։

Շատ զրպարտութիւններու և սուտ բարուրանքներու կրնայինք վերհանձնաբար լռել՝ և լռութեամբ պատասխանած սեպուիլ. սակայն ասոնք չափը անցուցին. և անանկ պատառ մը կըլլէ տալ կուզեն որ որկորնիս և աղիքնիս պիտի պատռէ, բարեխնամ Տէրը Թող դատէ. քանզի ինքը լաւ գիտէ որ մեք այդ յանցանքներուն և ոչ մէկուն տէրն եմք. Մեղուն և Միւնէտին Թող պատկառին քիչ մը, Թող պատկառին կըսեմք. քանզի աղատախօսութիւնք՝ լրբութեան փոխարկած են. ով Աստուած, այս է ուրեմն մեր վարձքը, այս պիտի ըլլայ մեր վաստակոց փոխարինութիւնը, ինչպէս համարձակեցաւ անարկիւղ արտասանել և միաբանութեանս վրայ սոսկալի եղեռնագործութեան յանցանք մը յարմարցուցանել։

Ո՞վ կրնայ համբերել և վշտացեալ սրտով չարտասուեր, երբ կը լսէ թէ իւր անմեղ անունը մարդասպանութեան ահռելի յանցանքովը կը դատապարտուի, թէպէտ Մեղուն (այն ատենուան միաբանութիւնը ըրաւ կըսէ). որով ինքզինքը արդարացունէ. սակայն մենք չեմք կրնար լռել. ինչու որ միաբանութեան անուն կայ խօսքին մէջ, և մեք իրմէն սովրելով կըսեմք որ, այսօր առաջնոց պատիւը աղտեղէց՝ վաղը վերջնոցս ալ այդ անիրաւ յանդգնութիւնը ընելու համարձակութիւնը կունենայ։ Ուստի ճշմարտասէր աչքով և անաջառ քննութեամբ թէ միաբանութեան ծերագոյնները և թէ քաղաքացի ժողովրդոց ծերերը քննեցինք և իմացանք որ այդ իրողութիւնը հոս բնաւ եղած չունի, այդ բառն

ալ խարտ առաւ է։ Այդ բառը՝ որ գրիչնիս չի համարձակիր արտադրել, բառ մը որ խղճմտանքի տէր մարդու դող ու սարսափ կը պատճառէ. գուցէ թէ մենք այդ եղելութիւնը մօռացած ըլլանք, բայց ուշիմ հրատարակիչը թող յիշեր այդ հազուադիւտ Եպիսկոպոսին անունը, որ մենքալ անոր վախճանը քննէինք. եթէ ճշմարտասէր է Մ՛ղուն, թող գոնէ այն տեղուան իշխող Պատրիարքին անունը յիշեր. մեք քննեցինք որ Թէոդորոս Սրբազանին օրոմը Կեսարիոյ և Անդրիանուպոլսոյ առաջնորդները եկած՝ և ողջամբ ետ դարձած են։ Բայց չէ՛. Մ՛ղուին միտքը ճշմարտութիւն յայտնել չէ, այլ՝ ինչպէս որ ըսինք ինքըզինքը մէջ ձգելով փառք որսալ է, կամ որոմ ցանել։ Եթէ ապգատէր և ճշմարտասէր էր, կրնար մեզի խրախոյս և քաջալերութիւն տալ՝ զոր սիրով և յօժարութեամբ կընդունէինք և շնորհակալ կըլլայինք. Ազգային կառավարութիւնը՝ թող նկատէ անգամմը, և տեսնայ թէ ինչ հոգեով գրուած են այն յօդուածները, ինչ չար իժի բերնէ թափած թոյներ են, որ շատ վեհ հոգիներու սիրտը կայլակելով աղիքները կը գալարէ։

Ով Աստուած, երանի՛ թէ զգար Ազգին կառավարութիւնը թէ ինչ ցաւ կզգամք և ինչ աղեսից մէջ եմք, յիշեցէ՛ք կաղաչեմք յիշեցէ՛ք մեր արդի վիճակը և 'ի գութ շարժեցէ՛ք. մենք որ մեր գլուխն զրկուած իբրև որբ կը ջրջիմք. Ազգը թող բուն գլխաւոր պէտքը անօրինէ, որ է ընտրել մեր գլուխը։ Ու ընդհանուր ժողովը գրած Աղերսագրութեան մէջ (որբ և անտէր բառերը) առիթ տուերէ շատերուն խորհիլ, թէ Երուսաղէմ մարդ չիկայ և պէտք է որ մէկը խրկեմք. չէ՛ չէ՛, այս հեռեռութիւնը սխալ է, մեր որբութիւնը ճշմարիտ է՝ բայց Սրբազան Պատրիարդ հոր՝ և որ յոյժ ցաւալին է գէտրդ

Եպիսկոպոս Հօր մահուամբը, և ոչ թէ մարդ շու-
նեներալնուս համար է. ընտրեցէք մեր գլուխը՝ որ
հոս հաստատուած ժողովներուն օրինաւոր նախա-
գահութիւնը ընէ, և ներքին խորհուրդը կազմելի՝
ինչպէս որ արտաքինը կազմուած է, ու ամէն մար-
դու շնորհացը համեմատ պաշտօններ տրվին, ան-
տեն կըտեսնաք որ ամենն ալ գործունեայ են. ա-
մենն ալ աշխատասէր և Ազգին յառաջադիմութեա-
նը ջանացող։ Հեղութեամբ կը խնդրեմք ո՛ Տեարք,
ողջմտութեամբ քննեցէք և մի ուշացունէք մեր գե-
տը, գիտցէք որ մեր անգլխութիւը այս ժամանակիս մէջ
շատ վտանգաւոր է, տեղապահի գալուստը չի կրնար
այս վտանգները արգիլել, մեր սիրտը շարունակ տը-
րտմանն մէջ է զանազան ազգաց երկիւղէն. գիտցէք
որ միշտ Սրբազան պաշտամանց մէջ երկիւղ և մտա-
տանջութիւն կըկրեմք. ամէն զգուշութիւն կըգոր-
ծածեմք՝ որ չըլլայ թէ Ազգին իրաւանց թշնամինե-
ը ժամանակ գտանք ըսելով՝ վրդովմունք մը հանեն,
և յափշտակութիւն մը ընեն. որ վերջը շատ սուղի
կընատի՝ ափսոս է։

Նրուսաղէմայ միաբանութիւնը խղճի տէր է,
և անոնց ամենէն անխիղճը զոր Մեղուն կը յիշէ, թե-
ւեւս իրեն չափ անխիղճ չեն. ամենէն յետինը իրեն
պէս շատերուն հետ չեմք վոխեր, քանզի երբ թըշ-
նամեաց սուրերը կը շողային մեզի դէմ, երբ քարեր
և փայտեր կըտեղային մեր գլխուն, այն չի հաւնած
անխիղճ միաբանները՝ խղճմտանաց արթնութեամբը
դէմ ելած, գլուխնին պատռած, թևերնին կոտրած,
կուրծքերնին վիրաւորած, արիւննին չի խնայելով
Ազգին իրաւունքը պաշտպանած են. և ամէն ատեն
ժամանակին բերմունքէն պատահած անկարգու-
թիւնները խղճմտանաց բողոքով դատապարտած են.
ուստի ինչ անխղճութիւն տեսեր է այդ Մեղուն,

որ չի խորհելով անխիղճ կանուանէ միաբանութիւը։ Ահա կարծեմք թէ այս չափով կարող եղանք ընդհանուր Ազգիս և բարեխորհուրդ կառավարութեան մեր իրաւունքը յայտնել, և բողոքելով՝ օրհնեալ Ազգէն պատիւ խնդրել։

Մեղուն խօսք մնալ կըսէ, որ եթէ ճշմարիտ է պէտք է որ իսպառ լռէ. կըսէ թէ "Սրբազան Պատրիարքին տեղ անտուկներ եկան Պոլիս", (թէպէտ մէջի ինչ ըլլալը չի գիտեր). թէ որ ստոյգ այսպէս եղած է. ուրեմն միաբանութիւնը անպարտ է և ուղենէ կրնայ խնդիրներ յարուցանել։ Ուրեմն միաբանութեան անտուկը լեցուներու բան չի՛ մնացեր. քանզի անտուկները Պոլիս գացած են. այս բանիս քննութիւնն ալ ընդհանուր Ազգին տեսչութեան արդար դատողութեանը յանձնելով՝ մենք կըվերջացուցեմք խօսքերնիս, յուսալով Ձեր պաշտպանութիւնը՝ և մեր աղերսանաց ընդունելութիւնը.

Ա՛նամք միշտ բարեացակամ աղօթանուէր 'ի Սրբազան վայրս Հարչարանաց Փրկչին, համակամ և անձնանուէր ընդհանուր Միաբանութիւն սուրբ Ուխտին Երուսաղէմի։

Ms

Ms

4142
4143
4144
NL0031295
NL0031294
NL0031293
4022
23
24